

# Մամուլի հաղորդագրություն

Երևան, 26 հունվարի, 2016

Մոտ 37000 աշակերտ կմասնակցի «Մեղու. հայերենը բոլորի համար» մրցույթին

Վաղը «Մեղու. հայերենը բոլորի համար» մրցույթի օրն է: Այս տարի մրցույթին մասնակցելու համար գրանցվել է Հայաստանի և Արցախի 942 դպրոցի 36774 աշակերտ: Մրցույթն անցկացվում է արդեն երրորդ անգամ:

Հայերենի մրցույթի նպատակն է համընդհանուր հետաքրքրություն առաջացնել հայոց լեզու առարկայի հանդեպ, այն առավել գրավիչ ու սիրելի դարձնել երեխաների համար, նորովի մատուցել հայոց լեզուն՝ ցույց տալով նրա ողջ հմայքն ու գեղեցկությունը, և զարգացնել երեխաների լեզվամտածողական ու լեզվագիտական ունակությունները:

«Մեզ համար շատ կարևոր է, որ յուրաքանչյուր աշակերտ ազնվորեն մոտենա մրցույթին՝ չարտագրի կամ չհուշի իր ընկերներին: Խորհուրդ եմ տալիս մասնակից աշակերտներին ուշադիր լսել կանոնների բացատրությունը, հետևել ժամանակին և, ամենակարևորը, չհուզվել», - նշում է «Մեղու» մրցույթի ծրագրի ղեկավար Շողիկ Մկրտչյանը:

«Մեղու 2016»-ի առաջադրանքներն ու ճիշտ պատասխանները կիրապարակվեն [www.meghu.am](http://www.meghu.am) կայքում **նոյեմբերի 10-ին**:

Յուրաքանչյուր մասնակից դպրոց **հունվարին** ստանալու է ամփոփ հաշվետվություն իր աշակերտների արդյունքների մասին, իսկ **փետրվարին** նախատեսվում են մրցանակաբաշխություններ Հայաստանի բոլոր մարզերում և Արցախում:

*«Մեղու» մրցույթն անցկացվում է տարին մեկ անգամ անմիջապես բոլոր մասնակից դպրոցներում:*

*Մրցույթը թեստային է: Թեստերը մեծամասամբ հայոց լեզու առարկայից են, սակայն կարող են ընդգրկել նաև գրականությունից այնպիսի հարցեր, որոնք ունեն լեզվամտածողական ու լեզվագիտական ուղղվածություն և չեն պահանջում գրական գործի իմացություն: Յուրաքանչյուր թեստ ունի պատասխանի 5 տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ:*

Մրցույթի պաշտոնական կազմակերպիչն է «Այբ» կրթական հիմնադրամը, որը 2009 թ.-ից Հայաստանում և 2010 թ.-ից նաև Արցախում մեծ հաջողությամբ կազմակերպում և անցկացնում է նմանատիպ «Կենգուրու» և «Ռուսական արջուկ» դպրոցական միջազգային մրցույթները:

Հայաստանում մրցույթի կազմակերպման գործընկերն է [«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ](http://www.usf.am)-ն:

## 37000 учеников будут участвовать в конкурсе «Пчелка»

Завтра состоится конкурс «Пчелка: армянский для всех». Для участия в конкурсе в этом году зарегистрировались 36774 учеников из 942 школ Армении и Арцаха.

Конкурс проводится уже третий год. Цель конкурса — вызвать всеобщий интерес к армянскому языку, сделать этот предмет более увлекательным, привить детям любовь к нему и развить языковое мышление и навыки языкознания у детей.

«Для нас очень важно, чтобы каждый ученик честно относился к конкурсу – не списывал и не подсказал своим друзьям. Советую участникам внимательно – слушать объяснение правил, следить за временем и, самое важное, не волноваться», – отмечает руководитель проекта конкурса «Пчелка» Шогик Мкртчян.

Тесты и правильные ответы конкурса «Пчелка 2016» будут опубликованы 10 ноября на сайте [www.meghu.am](http://www.meghu.am).

Каждая школа-участница в январе получит отчет о результатах своих учеников, а в феврале планируются вручения наград во всех регионах Армении и Степанакерте.

Официальный организатор конкурса «Пчелка: армянский для всех» – [Образовательный фонд «Айб»](#), который начиная с 2009 г. в Армении, а с 2010 г. также и в Арцахе, с большим успехом организовывает и проводит международные школьные конкурсы «Кенгуру» и «Русский медвежонок».

Организационный партнер конкурса в Армении – [ЗАО «Банк ВТБ \(Армения\)»](#).

## 37000 students are participating in the Meghu contest

Tomorrow is the day of “Meghu—Armenian for All.” This year, 36774 students from 942 schools of Armenia and Artsakh registered to participate in the contest.

The contest is being held for **the third time**. The aim of the contest is to raise interest toward the Armenian language, make it more attractive for children, newly present the Armenian language, showing all its beauty, and develop children’s linguistic skills and thinking.

“It is very important for us that every student approach the contest honestly. I advise the participants to listen to the explanations carefully, keep track of the time and, most importantly, not worry,” mentions Shoghik Mkrтчян, the project manager of the Meghu Contest.

Starting from **November 10**, the tests and correct answers of the **Meghu 2016** will be available on the contest website: [www.meghu.am](http://www.meghu.am).

Each participant school will get a report on its students' results in **January**. In **February**, award ceremonies in all regions of Armenia and in Stepanakert will be arranged.

*The official organizer of the "Meghu—Armenian for All" contest is the [Ayb Educational Foundation](#), which has been successfully conducting the Kangaroo and Russian Bear Cub international school contests in Armenia since 2009 and in Artsakh since 2010.*

*The organizational partner of the contest in Armenia is [VTB Bank \(Armenia\)](#).*